

ՀՀ Ազգային Ժողովի նախագահ  
Արարատ Միրզոյանին  
Երևան 0095, Մարշալ Բաղրամյան 19

## ՀԱՆՐԱԳԻՐ

Հարգելի պարոն Միրզոյան,

Երկու հազար տասնինը թվականի հոկտեմբերին Հայաստանում տեղի ունեցավ սելեկտիվ աբորտների դեմ պայքարի հանրային իրազեկման արշավ, որին միացան բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը: Վերջինս հայտարարեց, որ Հայաստանում սելեկտիվ աբորտների պատճառով տարեկան չի ծնվում մոտ 1,300 աղջիկ, իսկ վերջին 25 տարիների ընթացքում չի ծնվել 40,000 աղջիկ: Նախարարը նաև կոչ արեց տարբերություն չդնել տղաների և աղջիկների միջև և կարևորել բոլոր երեխաներին:

Նկատի ունենալով չճնված աղջիկների, ինչպես նաև չճնված տղաների կյանքի հիմնարար իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունը և հիմք ընդունելով «Հանրագրերի մասին» ՀՀ օրենքը և «Ազգային Ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքը՝ առաջարկում ենք ընդունել չճնված երեխայի կյանքի իրավունքի պաշտպանության մասին օրենք:

Օրենսդրական նախաձեռնության նախագիծը և հիմնավորումը առանձին գրքուկի ձևով կցվում են սույն հանրագրին՝ 25 օրինակով, առողջապահության և սոցիալական հարցերի, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության և հանրային


հարցերի մշտական հանձնաժողովներին և նրանց անդամներին ուղարկելու  
նպատակով:

Պատասխանատու անձ՝ փաստաբան Ներսես Իսաջանյան  
ՀՀ, ք. Երևան 0054, Դավթաշեն, Փիրույաններ 4/3, գր. 12  
(099) 00-11-53, nerses@vardanyanlaw.com

Փաստաբան Վարուժան Վարդանյան  
ՀՀ, ք. Երևան 0002, Եկմայան 6, 4-րդ հարկ, (077) 50-00-60

Փաստաբան Վահե Սիմոնյան  
ՀՀ, ք. Երևան 0028, Եկմայան 6, 4-րդ հարկ, (094) 24-52-44

 16.04.2020

 16.04.2020

 16.04.2020



Չծնված  
Երեխայի  
Կյանքի  
Իրավունքի  
Մասին

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**  
**«ՉԾՆՎԱԾ ԵՐԵՒԱՅԻ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ»**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ**

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 1991-2018թթ. Հայաստանում ընդհատվել է մոտ 434,000 հղիություն: Ենթադրվում է, որ իրականում այդ թիվը շատ ավելի մեծ է, քանի որ աբորտների զգալի մասը կատարվում են տնային պայմաններում և չեն հաշվառվում: Կարելի է փաստել, որ աբորտների «համաճարակը» շատ լուրջ բացասական ազդեցություն է ունեցել Հայաստանի բնակչության թվի, աշխատուժի մեծության, և հետևաբար՝ ստացվող եկամուտների և վճարվող հարկերի վրա: Այնուամենայնիվ, «Չծնված երեխայի կյանքի իրավունքի մասին» ՀՀ օրենքի և կից օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) նպատակը ոչ թե տնտեսական կամ սոցիալական իրավիճակի բարելավումն է, այլ մեր հասարակության ամենաթույլ, խոցելի և չպաշտպանված շերտի՝ չծնված երեխաների կյանքի իրավունքի պաշտպանությունն է:

Չծնված երեխայի հիմնարար իրավունքը՝ կյանքի իրավունքը, մեր երկրում անտեսվել է տասնամյակներ շարունակ: ԽՍՀՄ-ը աշխարհում առաջին պետությունն էր, որ օրինականացրեց աբորտները 1920թ., իսկ 1960-70-ական թվականներին այդ երկրում աբորտների թիվը հասավ տարեկան 6-7 միլիոնի:

**Ա. Չծնված երեխան՝ որպես «մարդկային էակ»**

Արդի բժշկական գիտության (եմբրիոլոգիայի) ոլորտում չի վիճարկվում այն փաստը, որ մարդկային կյանքը սկսվում է բեղմնավորման պահին, երբ արական և իգական սեռական բջիջները միաձուլվում են՝ ձևավորելով միանական բջիջ՝ զիգոտ: Այդ բջիջի ձևավորումն էլ նշանավորում է անհատական մարդկային կյանքի սկիզբը: Զիգոտը առանձին, կենդանի և ամբողջական (թեև ոչ հասուն) մարդկային էակ է: Այն գենետիկորեն տարբեր է ծնողներից, չի հանդիսանում նրանց մարմնի մասը՝ ի տարբերություն սերմնաբջիջի կամ ձվաբջիջի, որոնք ունեն սահմանափակ գործառույթներ՝ որպես ավելի մեծ օրգանիզմի մասեր:

Բժշկության ձեռքբերումները, մասնավորապես՝ ուլտրաձայնային հետազոտությունների զարգացումը, թույլ տվեց հստակ պատկերացում կազմել հղիության ընթացքում երեխայի զարգացման մասին: Արդեն հղիության 6-րդ շաբաթում հնարավոր է հայտնաբերել չծնված երեխայի սրտի զարկը, 8-րդ շաբաթից սկսած սրտի զարկին կարելի է հետևել ուլտրաձայնային հետազոտությամբ: Հղիության առաջին 22 շաբաթների ընթացքում չծնված երեխայի զարգացման վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն բերված է Հավելված 1-ում: Այսպիսով, չծնված երեխայի՝ մարդկային էակ լինելու փաստը, ընդհանուր առմամբ, վիճահարույց չէ:



## Բ. Չճնված երեխայի իրավունքների ճանաչումը ՀՀ իրավունքով և միջազգային իրավունքով

Չճնված երեխան որպես «մարդկային էակ» է համարվում նաև ՀՀ գործող օրենսդրությամբ: Մասնավորապես, ՀՀ կառավարության 23.02.2017թ. թիվ 180-Ն որոշմամբ հաստատված «Հղիության արհեստական ընդհատման կարգը և պայմանները» (այսուհետ՝ Կարգ) փաստաթղթում «պտուղ» և «երեխա» բառերն օգտագործվում են որպես հոմանիշներ (Կարգի 10-րդ կետ): Այսինքն՝ չճնված երեխայի «մարդկային էակ» լինելու փաստը ՀՀ կառավարության կողմից արդեն իսկ ճանաչված է:

Միավորված Ազգերի Կազմակերպության Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի նախաբանի մեջ նշվում է, որ «երեխան, նկատի ունենալով նրա ֆիզիկական և մտավոր անհատությունը, կարիք ունի հատուկ պաշտպանության և հատուկ հոգատարության, ներառյալ՝ պատշաճ իրավական պաշտպանությունը **ճնվելուց առաջ** և հետո»: Միավորված Ազգերի Կազմակերպության Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ մահապատիժը չի կարող ի կատար ածվել հղի կնոջ նկատմամբ՝ դրանով իսկ ուղղակիորեն պաշտպանելով չճնված երեխայի կյանքի իրավունքը:

ՀՀ Սահմանադրության համաձայն՝

- Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է (3-րդ հոդված):
- Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից (24-րդ հոդված):
- Ընտանիքը, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են (16-րդ հոդված):
- Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան (37-րդ հոդված):
- Արգելվում է մարդու վերարտադրողական կլոնավորումը (25-րդ հոդված):
- Բոլորը հավասար են օրենքի առջև (28-րդ հոդված):
- Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է (29-րդ հոդված):

Այսպիսով, կարելի է փաստել, որ բոլոր մարդկային էակները, այդ թվում՝ չճնված, Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն արժեք են և ունեն կյանքի իրավունք՝ անկախ գենետիկական հատկանիշներից, հաշմանդամությունից, տարիքից (այսինքն՝ նաև հղիության ժամկետից), անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

**Գ. Աբորտների վերաբերյալ գործող կարգավորումները**

Գործող օրենսդրությունը նախատեսել է մի շարք հանգամանքներ (նշված են ստորև աղյուսակում), որոնց առկայությունը թույլ է տալիս ընդհատել հղիությունը՝ չծնված երեխային զրկելով կյանքից:

	Աբորտը թույլատրող հանգամանքները	Գործող կարգավորում	Նախագծով առաջարկվող կարգավորում
1.	Հղիությունը մինչև 12 շաբաթական է	Թույլատրվում է	Չի թույլատրվում
2.	Կինը (չծնված երեխայի մայրը) հիվանդ է	Թույլատրվում է, եթե հիվանդությունն ընդգրկված է սահմանված ցանկում	Թույլատրվում է, եթե հիվանդությունն իրական վտանգ է ներկայացնում կնոջ կյանքի համար, և այդ վտանգը կարող է վերացվել հղիությունն ընդհատելով
3.	Չծնված երեխայի մոտ արատի առկայություն	Թույլատրվում է	Չի թույլատրվում
4.	Առկա են հանգամանքներ, որոնք ավելի հավանական են դարձնում երեխայի մոտ արատների զարգացումը (ընտանիքում զարգացման արատներով երեխաների կամ սեռի հետ փոխկապակցված ժառանգական հիվանդությունների առկայություն)	Թույլատրվում է	Չի թույլատրվում
5.	Առկա են առողջական վիճակի հետ չկապված հանգամանքներ (հղիության ընթացքում ամուսնու մահը կամ ամուսնալուծությունը, կնոջ կամ ամուսնու պատիժն ազատագրկման վայրում կրելը, հղիությունը՝ բռնաբարության արդյունքում):	Թույլատրվում է	Չի թույլատրվում

## 1. Հղիությունը մինչև 12 շաբաթական է

Համաձայն գործող օրենսդրության արքորը՝ մինչև 12 շաբաթական հղիության ժամկետը, կատարվում է կնոջ գրավոր դիմումի համաձայն (Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետ):

Նախագծով առաջարկվում է այդ դրույթը հանել՝ նկատի ունենալով, որ մարդկային էակը ձևավորվում է բեղմնավորման պահից, և այդ պահից էլ նրա կյանքի իրավունքը պետք է պաշտպանություն ստանա: Չծնված երեխային կյանքից զրկելը չպետք է թույլատրվի այն նույն պատճառներով, որոնք թույլ չեն տալիս սպանել արդեն ծնված երեխաներին: Տղամարդկանց և կանանց ազատություններն ավարտվում են այնտեղ, որտեղ սկսվում են այլ անձանց իրավունքներն ու ազատությունները, մասնավորապես՝ չծնված երեխայի կյանքի իրավունքը: Ֆինանսական, հոգեբանական, ֆիզիկական լրացուցիչ բեռը, որը դրվում է ծնողների վրա, նրանց իրավունք չի տալիս կյանքից զրկել երեխաներին՝ ծնված, թե չծնված: Ավելին, օրենքը պարտավորեցնում է ծնողներին հոգ տանել երեխաների համար: Հետևաբար ծնողները պարտավոր են ոչ միայն ձեռնպահ մնալ երեխայի կյանքի նկատմամբ ոտնձգություններից, այլ նաև պետք է միջոցներ ձեռնարկեն երեխայի անվտանգությունն ապահովելու համար:

Հետևաբար նպատակահարմար է արգելել մինչև 12 շաբաթական երեխային առանց հիմնավոր պատճառների, բացառապես կնոջ կամ այլ անձանց հայեցողությամբ կյանքից զրկելու պրակտիկան:

## 2. Կինը (չծնված երեխայի մայրը) հիվանդ է

Համաձայն գործող օրենսդրության՝ հղիությունը կարող է ընդհատվել մինչև 22 շաբաթական ժամկետը, եթե առկա են բժշկական ցուցումներ (Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին և 2-րդ կետեր): Կարգի 11-րդ կետը որպես «բժշկական ցուցում» սահմանել է մոտ 60 հիվանդությունից բաղկացած ցանկ, որոնցից որևէ մեկի առկայությունը թույլատրում է հղիության արհեստական ընդհատումը՝ անկախ այն հանգամանքից, թե հիվանդությունը որևէ վտանգ ներկայացնում է կնոջ կյանքի համար, թե ոչ: Օրինակ՝ չծնված երեխային կյանքից զրկելը թույլատրվում է, եթե կնոջ մոտ առկա են խլություն, խուլ-համրություն կամ տեսողական համակարգի հիվանդություններ (Կարգի 11-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» և «ը» պարբերություններ):

Նախագծով առաջարկվում է արգելել հղիության ընդհատումն այն դեպքերում, երբ կնոջ կյանքին իրական վտանգ չի սպառնում, կամ երբ նման վտանգը չի կարող վերացվել հղիության ընդհատմամբ: Հակառակ դեպքում չծնված երեխային կյանքից զրկելը չպետք է թույլատրվի այն նույն պատճառներով, որոնք թույլ չեն տալիս սպանել արդեն ծնված երեխաներին: Ֆինանսական, հոգեբանական, ֆիզիկական լրացուցիչ բեռը, որը դրվում է ծնողների վրա, նրանց իրավունք չի տալիս կյանքից զրկել երեխաներին՝ ծնված, թե չծնված:

Եթե հղիությունն իրական վտանգ է ներկայացնում մոր կյանքի համար, ապա պետք է նպատակ դրվի փրկել թե՛ մոր և թե՛ չծնված երեխայի կյանքը: Եթե չծնված երեխան կարող է կենսունակ լինել մոր մարմնից դուրս, ապա լուծումը վաղաժամ ծննդաբերություն

առաջացնելն է և ժամանակակից տեխնոլոգիաների օգնությամբ երեխայի կյանքը պահպանելը: Եթե չծնված երեխան մոր մարմնից դուրս կենսունակ չէ, ապա պետք է նախապատվությունը տալ մոր կյանքը փրկելուն, քանի որ մոր մահվան դեպքում չծնված երեխան նույնպես կմահանա: Նման դեպքերում (օրինակ՝ արտարգանդային հղիության դեպքում) թեև վիրաբուժական միջամտությունը հանգեցնում է չծնված երեխայի մահվանը, այդ միջամտության նպատակը ոչ թե կյանքից զրկելն է, այլ կյանք փրկելը:

Նախագծով առաջարկվում է հղիության արհեստական ընդհատումը թույլատրել միայն այն դեպքում, երբ բժշկական հանձնաժողովի որոշմամբ հաստատվի, որ կոնկրետ դեպքում կնոջ մոտ առկա հիվանդությունը իրական վտանգ է ներկայացնում նրա կյանքի համար, և միաժամանակ հղիության ընդհատումը կարող է վերացնել այդ վտանգը: Պետք է նաև նշել, որ ժամանակակից բժշկության պայմաններում երեխայի և մոր կյանքի միջև ընտրություն կատարելու անհրաժեշտությունը շատ հազվադեպ է առաջանում:

### **3. Չծնված երեխայի մոտ առկա է հիվանդություն կամ զարգացման արատ կամ առկա են հանգամանքներ, որոնք ավելի հավանական են դարձնում երեխայի մոտ հիվանդությունների զարգացման հնարավորությունը**

Համաձայն գործող օրենսդրության՝ հղիության ընդհատումը թույլատրվում է, եթե՝

- Առկա է նույնանման զարգացման արատներով երեխայի կրկնակի ծնունդ (Կարգի 12-րդ կետի 3-րդ ենթակետ),
- Առկա է ընտանիքում սեռի հետ փոխկապակցված ժառանգական հիվանդություններով երեխայի ծնունդ (Կարգի 12-րդ կետի 4-րդ ենթակետ),
- Առկա են բնածին արատներ, որոնք հանգեցնում են վերականգնման ոչ ենթակա կենսագործունեության սահմանափակման (Կարգի 12-րդ կետի 5-րդ ենթակետ):

Նախագծով առաջարկվում է արգելել հղիության ընդհատումն այն հիմքով, որ չծնված երեխան հիվանդ է, ծնվելուց հետո կունենա հաշմանդամություն կամ այլ արատ: Երեխայի կյանքի իրավունքը բարձրագույն արժեք է: Օրենքը չպետք է թույլատրի երեխային կյանքից զրկել միայն այն պատճառով, որ նրա «կենսագործունեությունը» կարող է լինել սահմանափակ: Երեխայի կյանքը որպես «արժեքավոր» կամ «անարժեք» որակելը խտրական մոտեցման դրսևորում է և չի բխում այն մարդասիրական արժեքներից, որոնք ընդունված են հայ հասարակության մեջ:

Եթե ծնողներն ինչ-ինչ պատճառներով պատրաստ չեն կրել հիվանդ երեխային խնամելու բեռը, ապա այդ բեռն իրենց վրա վերցնում են երեխային որդեգրելու ցանկություն ունեցող անձինք, իսկ նման անձանց բացակայության դեպքում՝ պետությունը, ի դեմս հարկատուների կողմից ֆինանսավորվող մասնագիտացված հաստատությունների: Հղիության արհեստական ընդհատումն առավել ևս չպետք է թույլատրվի այն դեպքում, երբ երեխայի հիվանդ լինելը դեռ հաստատված չէ, այլ ընդամենը ենթադրվում է, որ առկա է նման հիվանդությունների զարգացման ռիսկ:

Ինչ վերաբերվում է այն դեպքերին, երբ երեխայի մոտ ախտորոշվել է կյանքի հետ անհամատեղելի զարգացման արատ (Կարգի 12-րդ կետի 2-րդ ենթակետ), ապա պետք է նշել, որ նման ախտորոշումները շատ հազվադեպ են լինում միանշանակ ու անվիճելի: Հետևաբար,

Եթե առկա է գոնե փոքր հավանականություն, որ երեխան կապրի, ապա պետությունը պարտավոր է պաշտպանել նրա կյանքի իրավունքը: Այդ առումով արդարացված չէր լինի տարբերակված մոտեցում ցուցաբերել, մի կողմից, չճնված երեխաների, իսկ մյուս կողմից, ծնված երեխաների և մեծահասակների հանդեպ:

#### 4. Առկա են առողջական վիճակի հետ չկապված հանգամանքներ

Համաձայն գործող օրենսդրության՝ հղիության ընդհատումը թույլատրվում է հետևյալ «սոցիալական ցուցումների» առկայության դեպքերում՝

- Հղիության ընթացքում ամուսնու մահը (Կարգի 13-րդ կետի 1-ին ենթակետ),
- Կնոջ կամ ամուսնու՝ ազատագրկման վայրում պատիժ կրելը (Կարգի 13-րդ կետի 2-րդ ենթակետ),
- Հղիության ընթացքում ամուսնալուծությունը (Կարգի 13-րդ կետի 3-րդ ենթակետ),
- Հղիությունը՝ բռնաբարության արդյունքում (Կարգի 13-րդ կետի 4-րդ ենթակետ):

Նախագծով առաջարկվում է արգելել հղիության ընդհատումը նման «սոցիալական ցուցումների» առկայության դեպքում: Հակառակ դեպքում չճնված երեխայի կյանքի իրավունքը ստորադասվում է կնոջ հարմարություններին, որոնք չունեն պաշտպանության նույն աստիճանը, ինչ կյանքի իրավունքը: Չճնված երեխային կյանքից զրկելը չպետք է թույլատրվի այն նույն պատճառներով, որոնք թույլ չեն տալիս սպանել արդեն ծնված երեխաներին: Ֆինանսական, հոգեբանական, ֆիզիկական լրացուցիչ բեռը, որը դրվում է ծնողների վրա, նրանց իրավունք չի տալիս կյանքից զրկել երեխաներին՝ ծնված, թե չճնված:

Բռնաբարությունը ծանր հանցագործություն է, որը պետք է պատժվի օրենքի ամբողջ խստությամբ: Սակայն, կնոջ հանդեպ տեղի ունեցած անարդարությունը չի վերացվի, եթե թույլ տրվի ևս մեկ անարդարություն, այս անգամ՝ չճնված երեխայի նկատմամբ: Երեխան (ծնված կամ չճնված) չպետք է ենթարկվի մահապատժի իր կենսաբանական հոր կատարած հանցագործությունների համար (մեր երկրում նույնիսկ բռնաբարողը չի կարող ենթարկվել մահապատժի): Չճնված երեխայի՝ որպես առանձին մարդկային էակի կյանքը պետք է պաշտպանվի անկախ այն հանգամանքներից, որոնցում այդ կյանքը ձևավորվել է: Պետք է նաև նկատի ունենալ, որ հղիության ընդհատումը կարող է օգտագործվել բռնաբարության հանցագործությունը կոծկելու և պատժից խուսափելու համար: Եթե բռնաբարության գոհը չի ցանկանում կրել հիվանդ երեխային խնամելու բեռը, ապա այդ բեռն իրենց վրա վերցնում են երեխային որդեգրելու ցանկություն ունեցող անձինք, իսկ նման անձանց բացակայության դեպքում՝ պետությունը, ի դեմս հարկատուների կողմից ֆինանսավորվող մասնագիտացված հաստատությունների: Բռնաբարության արդյունքում առաջացած հղիությունների թվի վերաբերյալ վիճակագրություն հասանելի չէ: Սակայն կարելի է ենթադրել որ Հայաստանում նման դեպքերը շատ հազվադեպ են լինում, հավանաբար՝ մի քանի տարին մեկ անգամ<sup>1</sup>: Այս

<sup>1</sup> Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2013-17թթ. հանրապետությունում գրանցվել է տարեկան միջինը 25.8 բռնաբարություն և բռնաբարության փորձ: Բռնաբարության արդյունքում հղիանալու հավանականությունը տարբեր հետազոտողների կողմից խիստ տարբեր է գնահատվել՝ 0,1 տոկոսից մինչև 10 տոկոս (հաշվի են առնվում այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են կնոջ տարիքը, բեղմնավորման փուլում գտնվելու, անպտղության, հակաբեղմնավորիչների օգտագործման, սեռական ակտը ավարտին հասցնելու, վիժման հավանականությունը և այլն): Եթե խիստ մոտավոր հաշվարկի համար ընդունենք հղիանալու 1 տոկոս հավանականությունը, ապա կարելի է ենթադրել, որ Հայաստանում բռնաբարության արդյունքում հղիություն առաջանում է մոտ 4 տարին մեկ անգամ: Եթե



խնդրի իրականում փոքր մասշտաբը հասկանալը կարևորվում է նաև այն պատճառով, որ աբորտների կողմնակիցները հաճախ շահարկում են այն՝ փորձելով աբորտների վերաբերյալ ընդհանուր կարգավորումները հիմնավորել խիստ մասնավոր ու բացառիկ դեպքերի վրա:

## **Դ. Աբորտների կարգավորման էթիկական և բարոյական կողմը**

Չճնված երեխաների կյանքի պաշտպանությունը համահունչ է այն ավանդական մարդասիրական արժեքներին, որոնցով առաջնորդվում է հայ հասարակության մեծամասնությունը: Քրիստոնեական բոլոր ավանդական եկեղեցիները միանշանակ պաշտպանում են չճնված երեխայի կյանքի իրավունքը և դատապարտում են աբորտը: Հայ առաքելական եկեղեցու դիրքորոշման համաձայն՝ աբորտի գաղափարը եկեղեցու տեսակետից դատապարտելի է և անընդունելի (Գևորգյան հոգևոր ճեմարան, «Կենսաէթիկայի հիմնահարցերը» ուսումնասօժանդակ ձեռնարկ, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.qahana.am/am/christian/show/502403040/0>): Ռուս ուղղափառ եկեղեցու 2000թ. սոցիալական հայեցակարգի հիմունքների մեջ նշվում է հետևյալը՝ «հնագույն ժամանակներից Եղեկեցին հղիության դիտավորյալ ընդհատումը (աբորտը) դիտում է որպես ծանր մեղք: Կրոնական կանոնները աբորտը հավասարեցնում են մարդասպանությանը»: Կաթոլիկ եկեղեցու 1968թ. «Humanae vitae» փաստաթղթում նշվում է հետևյալը՝ «մարդկային կյանքը բեղմնավորման պահից պետք է ստանա բացարձակ հարգանք և պաշտպանություն: Մարդու գոյության առաջին իսկ պահից պետք է ճանաչվեն մարդկային անձի բոլոր իրավունքները, այդ թվում՝ յուրաքանչյուր անմեղ էակի՝ կյանքի անքակտելի իրավունքը: Առաջին դարից Եկեղեցին հռչակել է արհեստականորեն առաջացվող աբորտի բարոյական չարիքը: Այդ ուսմունքը չի փոխվել: Այն մնում է անսասան: Գիտակցված աբորտը, այսինքն՝ որը ցանկալի է որպես նպատակ կամ որպես միջոց, խորապես հակասում է բարոյական օրենքին»: Բողոքականության հիմնադիրներից Ժան Կալվինը նշում էր, որ «պտուղը, թեև թաքնված է մոր արգանդում, արդեն իսկ մարդկային էակ է: Հետևաբար, եթե նրան զրկում են կյանքից, որը նա դեռ նույնիսկ չի հասցրել վայելել, ապա այդպիսի արարքը ոչ այլ ինչ է, քան մեծագույն հանցագործություն»:

## **Ե. Ամփոփում**

ՀՀ Սահմանադրությունը հավասարապես ճանաչում է բոլոր մարդկային էակների կյանքի իրավունքը՝ որպես բարձրագույն արժեք՝ հատուկ պաշտպանելով և հովանավորելով երեխաներին: Արգելելով մարդու վերարտադրողական կլոնավորումը՝ ՀՀ Սահմանադրությունը ուղղակիորեն պաշտպանում է չճնված երեխայի կյանքի իրավունքը: Սակայն, աբորտների վերաբերյալ գործող կարգավորումները հաշվի չեն առնում արդի բժշկական գիտության ձեռքբերումները՝ ամրագրելով չճնված երեխաների իրավագուրկ կարգավիճակը, ինչն առերևույթ հակասում է այն արժեքներին, որոնք ամրագրված են ՀՀ Սահմանադրության մեջ և որոնցով առաջնորդվում է մեր երկրի բնակչության բացարձակ մեծամասնությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝

---

բռնաբարության արդյունքում հղիացած բոլոր կանայք որոշեն ընդհատել հղիությունը, այդ դեպքերը կկազմեն ընդհանուր աբորտների միայն մոտ 0,04 տոկոսը:

1. Օրենքով ամրագրել չձևված երեխայի կյանքի իրավունքը,
2. Հղիության արհեստական ընդհատման միջոցով երեխային կյանքից զրկելը թույլատրել միայն այն դեպքում, երբ նման ընդհատումը կարող է վերացնել երեխայի մոր կյանքին սպառնացող վտանգը,
3. Չձևված երեխային կյանքից ապօրինի զրկելու համար նախատեսել քրեական պատասխանատվություն՝ միաժամանակ պատասխանատվությունից ազատելով երեխայի մորը և բարեխիղճ բուժաշխատողներին:

## Հաճախ տրվող հարցեր

### 1. Արդյո՞ք չճնված երեխան (պտուղը) կարող է համարվել անձ և հետևաբար օժտված լինել կյանքի իրավունքով և այլ իրավունքներով

Երբեմն նշվում է, որ չնայած պտուղը մարդկային էակ է, այն «անձ» չէ և հետևաբար չունի կյանքի իրավունք: Որպես այդ մոտեցումը հիմնավորող փաստեր սովորաբար նշվում են չճնված երեխայի չափը, զարգացման աստիճանը, մորից կախվածության աստիճանը:

Հղիության առաջին շաբաթների ընթացքում չճնված երեխան կարող է լինել միկրոսկոպիկ չափերի, ինչը հարց է առաջացնում, թե արդյոք նման փոքր էակը կարող է համարվել «անձ»: Սակայն, չափը չի կարող որոշել մարդկային էակի արժեքը: Ֆիզիկապես ավելի մեծ մարդիկ ավելի արժեքավոր չեն, քան փոքրամարմինները: Նորածին երեխան տասնյակ անգամներ ավելի փոքր է, քան մեծահասակը, սակայն օրենքը նորածնի կյանքը պաշտպանում է նույն կերպ, ինչպես մեծահասակին:

Չճնված երեխաները թերզարգացած են, չունեն ինքնագիտակցություն և հղիության սկզբնական շրջանում ցավ չեն զգում: Սակայն, նորածինները նույնպես չունեն ինքնագիտակցություն և մեծահասակների համեմատությամբ թերզարգացած են: Այլ կերպ ասած՝ մարդկային կյանքի արժեքը չի կարող կախված լինել ունակություններից: Մեծահասակների մեջ նույնպես կան անձինք, որոնք մտավոր կամ ֆիզիկական արատների պատճառով չունեն որոշ ունակություններ, սակայն օրենքը հավասարապես պաշտպանում է նրանց կյանքի իրավունքը: Կոմայի մեջ գտնվող հիվանդները նույնպես չունեն ինքնագիտակցություն, չեն մտածում և ցավ չեն զգում, բայց շարունակում են համարվել «անձինք»: Ընդ որում՝ կոմատոզ վիճակը կարող է տևել տարիներ՝ առանց այդ վիճակից դուրս գալու երաշխիքների: Մինչդեռ չճնված երեխայի դեպքում անգիտակից վիճակը տևում է մի քանի ամիս, իսկ գիտակցություն ձեռք բերելը միանգամայն կանխատեսելի է և ընդամենը ժամանակի հարց է:

Չճնված երեխան կախվածություն ունի մեկ անձից՝ մորից: Սակայն նորածին երեխան նույնպես ինքնուրույն չէ և ամբողջությամբ կախված է իրեն խնամողից: Մարդկային կյանքի արժեքը չի կարող պայմանավորված լինել մեկ կամ մի քանի անձանցից կախվածության աստիճանով: Ավելին, հենց երեխաների կախվածությունն է, որ հիմնավորում է հասարակությունից և պետությունից լրացուցիչ պաշտպանություն և խնամք ստանալու անհրաժեշտությունը:

Պետք է փաստել, որ կյանքի իրավունքը պատկանում է բոլոր մարդկային էակներին, այդ պատճառով էլ հիմնարար իրավունքները կոչվում են «մարդու իրավունքներ», ոչ թե «անձի» իրավունքներ: Ավելին, բոլոր մարդկային էակները «անձինք» են: Սոցիալական որևէ խմբին (կանանց, հաշմանդամներին, սևամորթներին, հրեաներին, տարեցներին, փոքրահասակներին և այլն) իրավունքներից զրկելը չի կարող ընդունելի լինել մարդասիրական արժեքներով առաջնորդվող հասարակության մեջ:

## **2. Եթե հղիությունը անցնում է դժվար պայմաններում, արդյո՞ք չպետք է թույլատրվի դրա ընդհատումը**

Չծնված երեխային կյանքից զրկելը չպետք է թույլատրվի այն նույն պատճառներով, որոնք թույլ չեն տալիս սպանել արդեն ծնված երեխաներին: Ֆինանսական, հոգեբանական, ֆիզիկական լրացուցիչ բեռը, որը դրվում է ծնողների վրա, նրանց իրավունք չի տալիս կյանքից զրկել երեխաներին՝ ծնված, թե չծնված:

## **3. Իսկ բռնաբարության արդյունքում առաջացած հղիությունը**

Բռնաբարությունը ծանր հանցագործություն է, որը պետք է պատժվի օրենքի ամբողջ խստությամբ: Սակայն, կնոջ հանդեպ տեղի ունեցած անարդարությունը չի վերացվի, եթե թույլ տրվի ևս մեկ անարդարություն, այս անգամ՝ չծնված երեխայի նկատմամբ: Երեխան (ծնված կամ չծնված) չպետք է ենթարկվի մահապատժի իր կենսաբանական հոր կատարած հանցագործությունների համար (մեր երկրում նույնիսկ բռնաբարողը չի կարող ենթարկվել մահապատժի): Չծնված երեխայի՝ որպես առանձին մարդկային էակի կյանքը պետք է պաշտպանվի անկախ այն հանգամանքներից, որոնցում այդ կյանքը ձևավորվել է: Պետք է նաև նկատի ունենալ, որ հղիության ընդհատումը կարող է օգտագործվել բռնաբարության հանցագործությունը կոծկելու և պատժից խուսափելու համար:

## **4. Իսկ եթե մոր կյանքը վտանգված է**

Եթե հղիությունն իրական վտանգ է ներկայացնում մոր կյանքի համար, ապա պետք է նպատակ դրվի փրկել թե՛ մոր և թե՛ չծնված երեխայի կյանքը: Եթե չծնված երեխան կարող է կենսունակ լինել մոր մարմնից դուրս, ապա լուծումը վաղաժամ ծննդաբերություն առաջացնելն է և ժամանակակից տեխնոլոգիաների օգնությամբ երեխայի կյանքը պահպանելը: Եթե չծնված երեխան մոր մարմնից դուրս կենսունակ չէ, ապա պետք է նախապատվությունը տալ մոր կյանքը փրկելուն, քանի որ մոր մահվան դեպքում չծնված երեխան նույնպես կմահանա: Նման դեպքերում (օրինակ՝ արտարգանդային հղիության դեպքում) թեև վիրաբուժական միջամտությունը հանգեցնում է չծնված երեխայի մահվանը, այդ միջամտության նպատակը ոչ թե կյանքից զրկելն է, այլ կյանք փրկելը:

## **5. Արդյո՞ք կինն իրավունք չունի ազատորեն տնօրինել իր մարմինը և ընդհատել անցանկալի հղիությունը**

Պետք է արձանագրել, որ չծնված երեխան կնոջ մարմնի մասը չէ: Այն գտնվում է մոր մարմնում, կախված է մորից, սակայն առանձին մարդկային էակ է՝ իր սեռով, արյան խմբով, գենետիկ կոդով և այլն: Տղամարդկանց և կանանց ազատություններն ավարտվում են այնտեղ, որտեղ սկսվում են այլ անձանց իրավունքներն ու ազատությունները, մասնավորապես՝ չծնված երեխայի կյանքի իրավունքը: Մոր կողմից չծնված երեխային կյանքից զրկելը չպետք է թույլատրվի այն նույն պատճառներով, որոնցով չի թույլատրվում մոր կողմից նորածին երեխային սպանելը:

Ավելին, օրենքը պարտավորեցնում է ծնողներին հոգ տանել երեխաների համար: Հետևաբար ծնողները պարտավոր են ոչ միայն ձեռնպահ մնալ երեխայի կյանքի նկատմամբ ոտնձգություններից, այլ նաև պետք է միջոցներ ձեռնարկեն երեխայի անվտանգությունն ապահովելու համար:

**6. Եթե հայտնի է, որ երեխան հիվանդ է, արդյո՞ք ավելի ճիշտ չէ դադարեցնել հղիությունը, քան երեխային դատապարտել տառապալից կյանքի**

Չճնված երեխայի սպանությունը արդարացված չէ այն նույն պատճառներով, որոնցով չի թույլատրվում հիվանդ նորածինների, փոքրահասակների և մեծահասակների սպանությունը: Երեխայի կյանքը որպես «արժեքավոր» կամ «անարժեք» որակելը խտրական մոտեցման դրսևորում է և չի բխում այն մարդասիրական արժեքներից, որոնք ընդունված են հայ հասարակության մեջ: Յուրաքանչյուր մարդկային էակ կյանքի ընթացքում ստանում է տառապանքի իր բաժինը: Օրինակ՝ մարդը կարող է տառապել աղքատությունից, ինչը չի նշանակում, որ նրան կարելի է ֆիզիկապես ոչնչացնել: Անհատի և հասարակության արձագանքը տառապանքին պետք է լինի կարեկցանքը և օգնությունը, ոչ թե տառապողին վերացնելը:

**7. Եթե արբորտները անօրինական դառնան, արդյո՞ք դա չի հանգեցնի նրան, որ բազմաթիվ կանայք արբորտներ կանեն տնային պայմաններում՝ վտանգելով իրենց կյանքը**

Չճնված երեխայի կյանքը պաշտպանության տակ առնելով՝ պետությունը ուղերձ է հղում հանրությանը այն մասին, որ չճնված երեխային սպանելը անընդունելի է, ինչպես մյուս հանցագործությունները:

Կարելի է կանխատեսել, որ ոչ բոլորի համար այդ ուղերձը համոզիչ կլինի, և կլինեն անձինք, որոնք հղիությունն ընդհատելու համար կխախտեն օրենքը՝ վտանգելով իրենց առողջությունը: Սակայն, եթե արգելքը հիմնավորված է, ապա անտրամաբանական կլինի վերացնել այն միայն այն պատճառով, որ արգելքը խախտողները վտանգում են իրենց առողջությունը: Օրինակ՝ ավազակային հարձակումը վտանգավոր է նաև հարձակվողի համար, քանի որ տուժողը կամ ոստիկանները կարող են վնաս պատճառել նրա առողջությանը և կյանքին: Սակայն տրամաբանական չէր լինի օրինականացնել ավազակային հարձակումները հարձակվողների առողջությունը պաշտպանելու համար այն պարզ պատճառով, որ հասարակությունը և պետությունը որոշել են, որ ավազակությունը սխալ է և չարիք:

**8. Արդյո՞ք հնարավոր կլինի որդեգրողներ գտնել բոլոր «անցանկալի» երեխաների համար**

«Անցանկալի» երեխաներին և ընդհանրապես հասարակության «անցանկալի» անդամներին ոչնչացնելը բռնատիրական ռեժիմներին հատուկ երևույթ է, որը չի կարող ընդունելի լինել մարդասիրական արժեքներով ղեկավարվող հասարակությունում: Հետևաբար, անկախ այն հանգամանքից, թե երեխաների ծնունդը ինչ լրացուցիչ բեռ է առաջացնելու ծնողների, որդեգրողների, խնամատարների, հատուկ հաստատությունների համար, չճնված երեխաների սպանությունը չի կարող արդարացված լինել: Երեխայի կյանքը բացարձակ արժեք է՝ անկախ որդեգրման հանձնելու կամ ընտանիքում տեղավորելու հնարավորությունից:

Ամեն դեպքում, պետք է նաև արձանագրել, որ ներկայումս գոյություն ունի երեխաներ որդեգրել ցանկացող անձանց (ՀՀ քաղաքացիների և օտարերկրացիների) մեծ թիվ, և բոլոր



հիմքերը կան ենթադրելու, որ չընդհատված հղիությունների արդյունքում ծնված երեխաներին ընտանիքներում տեղավորելը միանգամայն հնարավոր կլինի:

**9. Արդո՞ք պետությունը պարտավոր է միջամտել: Հնարավո՞ր չէ արդյոք հղիության ընդհատման հարցերը թողնել ծնողների հայեցողությանը**

Պետությունը չի կարող չեզոք դիրք զբաղեցնել: Այն կամ ճանաչում և պաշտպանում է սոցիալական որոշակի խմբին, կամ չի ճանաչում՝ թույլ տալով ֆիզիկապես ոչնչացնել այն: Հրաժարվելով ճանաչել և պաշտպանել չծնված երեխաներին՝ պետությունը ոչ թե չեզոք դիրք է զբաղեցնում, այլ իրավագրկում է սոցիալական այդ խմբին՝ թույլ տալով ծնողներին և բժիշկներին կյանքից զրկել չծնված երեխաներին: Եթե չծնված երեխաները մարդկային էակներ են, ապա պետությունը պարտավոր է ճանաչել և պաշտպանել նրանց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ  
ՉԾՆՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԿՑԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Կյանքի իրավունքը մարդուն պատկանում է բեղմնավորման պահից՝ անկախ սեռից, առողջական վիճակից, գենետիկական հատկանիշներից, տարիքից, անձնական կամ սոցիալական այլ հանգամանքներից:

**Հոդված 2.** Պետությունը ճանաչում և պաշտպանում է չճանաչված երեխայի կյանքի իրավունքը:

**Հոդված 3.** Հղիության արհեստական ընդհատումը կարող է թույլատրվել, եթե այն իրական վտանգ է ներկայացնում չճանաչված երեխայի մոր կյանքի համար:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ

«ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» 2002 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՕ-474-Ն օրենքում (այսուհետ՝ Օրենք) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝  
«2) հղիության արհեստական ընդհատում (աբորտ)՝ որևէ գործիքի, սարքի, դեղի կամ այլ նյութի կամ միջոցի օգտագործումը կամ նշանակումը, որը կատարվում է հղիության ընդհատման նպատակով և որը ողջամիտ հավանականությամբ հանգեցնելու է չծնված երեխայի մահվանը: Հղիության արհեստական ընդհատում չեն համարվում այն գործողությունները, որոնք ուղղված են երեխայի կամ նրա մոր կյանքը պահպանելու նպատակով վաղաժամ ծննդաբերությունն առաջացնելուն կամ մահացած երեխային կնոջ մարմնից հեռացնելուն:»:

2. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) Ուժը կորցրած ճանաչել 1-ին, 2-րդ, 4-րդ և 6-րդ մասերը:

2) Հոդվածը լրացնել 2.1-րդ և 2.2-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«2.1. Հղիության արհեստական ընդհատումը թույլատրվում է, եթե

1) հղիությունն արտարգանդային է, կամ

2) հղիությունն իրական վտանգ է ներկայացնում մոր կյանքի համար, և այդ վտանգը կարող է վերացվել հղիությունն ընդհատելով: Իրական վտանգի առկայությունը յուրաքանչյուր դեպքում հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշմամբ: Ընդ որում, հղիության արհեստական ընդհատում իրականացնող անձը պարտավոր է ողջամիտ ջանքեր գործադրել թե՛ մոր, և թե՛ չծնված երեխայի կյանքը փրկելու համար, եթե նման հնարավորություն կա:

2.2. Հղիության արհեստական ընդհատումը թույլատրելու մասին Հանձնաժողովի որոշումը պետք է կայացվի մինչև հղիության արհեստական ընդհատումը՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընդհատումը պետք է կատարվի անհապաղ՝ չծնված երեխայի մոր կյանքին սպառնացող վտանգը վերացնելու համար: Նման դեպքերում հղիության արհեստական ընդհատումը կատարվում է բժշկական կրթություն ունեցող անձի հիմնավորված որոշմամբ, որը 10-օրյա ժամկետում ներկայացվում է Հանձնաժողովին:»:

3) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«3. Հղիության ընդհատման հիմքերի առկայության դեպքում ընդհատումը կարող է կատարվել միայն չծնված երեխայի մոր համաձայնությամբ, իսկ եթե մոր վիճակը թույլ չի տալիս արտահայտել իր կամքը՝ Հանձնաժողովի որոշմամբ:»:

4) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«8. Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է հղիության արհեստական ընդհատման կարգն ու պայմանները:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**  
**«ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ**  
**ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 2. Օրենքի հիմնական հասկացությունները**

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) ...

2) հղիության արհեստական ընդհատում (աբորտ)՝ բժշկական միջամտություն, որը կատարվում է հղիության ընդհատման նպատակով՝ որևէ գործիքի, սարքի, դեղի կամ այլ նյութի կամ միջոցի օգտագործումը կամ նշանակումը, որը կատարվում է հղիության ընդհատման նպատակով և որը ողջամիտ հավանականությամբ հանգեցնելու է չծնված երեխայի մահվանը: Հղիության արհեստական ընդհատում չեն համարվում այն գործողությունները, որոնք ուղղված են երեխայի կամ նրա մոր կյանքը պահպանելու նպատակով վաղաժամ ծննդաբերություն առաջացնելուն կամ մահացած երեխային կնոջ մարմնից հեռացնելուն:

3) ...

**Հոդված 10. Հղիության արհեստական ընդհատումը (աբորտը)**

1. Յուրաքանչյուր կին ունի հղիության արհեստական ընդհատման (աբորտի) իրավունք: Հղիության արհեստական ընդհատումը (աբորտը) (այսուհետ՝ ընդհատում)՝

1) մինչև 12 շաբաթական հղիության ժամկետը կատարվում է կնոջ գրավոր դիմումի համաձայն: Բժշկական ցուցումների դեպքում ընդհատումը մինչև 12 շաբաթական հղիության ժամկետը իրականացվում է կնոջ գրավոր համաձայնությամբ:

2) 12-ից մինչև 22 շաբաթական հղիության ժամկետը կատարվում է բացառապես բժշկական (ներառյալ՝ սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականության դեպքում) կամ սոցիալական ցուցումների առկայության դեպքում՝ կնոջ գրավոր համաձայնությամբ:

2. Բժշկի կողմից բժշկական կամ սոցիալական ցուցումների՝ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված կարգով ընդունված ցանկում չնախատեսված որևէ այլ դեպքում, ներառյալ՝ սեռով պայմանավորված 12-ից մինչև 22 շաբաթական ընդհատումն արգելվում է:

2.1. Հղիության արհեստական ընդհատումը թույլատրվում է, եթե

3) հղիությունն արտարգանդային է, կամ

4) հղիությունն իրական վտանգ է ներկայացնում մոր կյանքի համար, և այդ վտանգը կարող է վերացվել հղիությունն ընդհատելով: Իրական վտանգի առկայությունը յուրաքանչյուր դեպքում հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշմամբ: Ընդ

որում, հղիության արհեստական ընդհատում իրականացնող անձը պարտավոր է ողջամիտ ջանքեր գործադրել թե՛ մոր, և թե՛ չծնված երեխայի կյանքը փրկելու համար, եթե նման հնարավորություն կա:

2.2. Հղիության արհեստական ընդհատումը թույլատրելու մասին Հանձնաժողովի որոշումը պետք է կայացվի մինչև հղիության արհեստական ընդհատումը՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընդհատումը պետք է կատարվի անհապաղ՝ չծնված երեխայի մոր կյանքին սպառնացող վտանգը վերացնելու համար: Նման դեպքերում հղիության արհեստական ընդհատումը կատարվում է բժշկական կրթություն ունեցող անձի հիմնավորված որոշմամբ, որը 10-օրյա ժամկետում ներկայացվում է Հանձնաժողովին:

3. Ընդհատումը անչափահասի (օրենքով նախատեսված լրիվ գործունակություն ձեռք չբերելու դեպքերում) դիմումով կատարվում է նրա օրինական ներկայացուցիչների գրավոր համաձայնությամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առողջապահական հաստատության գործադիր մարմնի ղեկավարի համապատասխան ակտով ստեղծված մշտապես գործող բժշկական հանձնաժողովի որոշման հիման վրա: Հղիության ընդհատման հիմքերի արկայության դեպքում ընդհատումը կարող է կատարվել միայն չծնված երեխայի մոր համաձայնությամբ, իսկ եթե մոր վիճակը թույլ չի տալիս արտահայտել իր կամքը՝ Հանձնաժողովի որոշմամբ:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում ընդհատումից առաջ բժիշկը իրեն դիմած հղի կնոջը պարտավոր է տրամադրել ընդհատման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու ժամանակահատված՝ երեք օրացուցային օր ժամկետով (իսկ եթե երրորդ օրացուցային օրը համընկնում է հղիության 12-րդ շաբաթը լրանալու օրվան, ապա մինչև այդ ժամկետը լրանալը), որը հաշվվում է կնոջ՝ ընդհատման համար բժշկին առաջին անգամ դիմելու պահից:

5. Ընդհատումը կարող է իրականացվել միայն մանկաբարձական և գինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման լիցենզիա ունեցող հիվանդանոցային առողջապահական հաստատություններում:

6. Ընդհատման բժշկական միջամտությունն իրականացնելուց անմիջապես առաջ բժիշկը պարտավոր է կնոջը ընդհատման հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ տրամադրել անվճար խորհրդատվություն, որի մասին բժիշկը գրառում է ընդհատման համար դիմած կնոջ բժշկական փաստաթղթերում, և որը հաստատվում է կնոջ ստորագրությամբ:

7. Ընդհատման բժշկական միջամտությունն իրականացնելուց անմիջապես հետո բժիշկը պարտավոր է կնոջը անցանկալի հղիությունը կանխելու միջոցների և (կամ) մեթոդների ընտրության վերաբերյալ տրամադրել անվճար բժշկասոցիալական խորհրդատվություն, որի մասին բժիշկը գրառում է ընդհատման համար դիմած կնոջ բժշկական փաստաթղթերում, և որը հաստատվում է կնոջ ստորագրությամբ:

8. Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է հղիության արհեստական ընդհատման կարգն ու պայմանները, ներառյալ՝

1) ընդհատման հակացուցումները և անհրաժեշտ հետազոտությունների ցանկը:

2) ընդհատման բժշկական և սոցիալական ցուցումների ցանկը:

3) մինչև 12-շաբաթական ընդհատման համար հղի կնոջ կողմից ներկայացվող գրավոր դիմումի ձևը:

4) բժշկական կամ սոցիալական ցուցումներից ելնելով՝ ընդհատման համար հղի կնոջ կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից ներկայացվող գրավոր համաձայնության ձևը:

5) անչափահասի (օրենքով նախատեսված լրիվ գործունակություն ձեռք չբերելու դեպքերում) հղիության ընդհատման համար նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների կողմից գրավոր համաձայնության ձևը:

9. Սույն հոդվածով սահմանված պահանջների խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն քրեական օրենսգրքի 122-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

**«Հոդված 122. Չճնված երեխային կյանքից զրկելը**

1. Չճնված երեխային ապօրինաբար և դիտավորությամբ կյանքից զրկելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:
2. Չճնված երեխային կյանքից զրկելու համար քրեական պատասխանատվության ենթակա չէ՝
  - 1) չճնված երեխայի մայրը,
  - 2) հղիության արհեստական ընդհատում կատարած կամ այն թույլատրած անձը, եթե նա ողջամտորեն կարծել է, որ առկա են հղիությունն արհեստականորեն ընդհատելու օրենքով նախատեսված հիմքերը:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԸ**

**Հոդված 122. Ապօրինի աբորտ կատարելը**

1. Համապատասխան բժշկական բարձրագույն կրթություն ունեցող անձի կողմից ապօրինի աբորտ կատարելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Համապատասխան բժշկական բարձրագույն կրթություն չունեցող անձի կողմից ապօրինի աբորտ կատարելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը երկուհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված գործողությունները, որոնք անզգուշությամբ առաջացրել են տուժողի մահ կամ ծանր վնաս են պատճառել նրա առողջությանը՝

պատժվում են ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

**Հոդված 122. Չճնված երեխային կյանքից զրկելը**

1. Չձևված երեխային ապօրինաբար և դիտավորությամբ կյանքից զրկելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:

2. Չձևված երեխային կյանքից զրկելու համար քրեական պատասխանատվության ենթակա չէ՝

1) չձևված երեխայի մայրը,

2) հղիության արհեստական ընդհատում կատարած կամ այն թույլատրած անձը, եթե նա ողջամտորեն կարծել է, որ առկա են հղիությունն արհեստականորեն ընդհատելու՝ օրենքով նախատեսված հիմքերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Օրենսգրքի 47.12-րդ հոդվածում՝
  - 1) վերնագրից հանել «առաջ և» բառերը:
  - 2) 1-ին և 3-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:
2. Օրենսգրքի 47.13-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրը:

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԸ

**Հոդված 47.12.** Բժշկի կողմից հղիության արհեստական ընդհատում (աբորտ) կատարելուց ~~առաջ և~~ հետո օրենքով նախատեսված անհրաժեշտ միջոցառումներ չիրականացնելը

~~1. Բժշկի կողմից հղիության արհեստական ընդհատումից (աբորտից) առաջ կնոջը հղիության արհեստական ընդհատման հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ անվճար խորհրդատվություն չտրամադրելը կամ խորհրդատվություն տրամադրելու մասին բժշկական փաստաթղթերում գրառումներ չկատարելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից հիսնապատիկի չափով:~~

2. Բժշկի կողմից հղիության արհեստական ընդհատումից (աբորտից) անմիջապես հետո կնոջը անցանկալի հղիությունը կանխելու միջոցների և (կամ) մեթոդների ընտրության վերաբերյալ անվճար բժշկասոցիալական խորհրդատվություն չտրամադրելը կամ խորհրդատվություն տրամադրելու մասին բժշկական փաստաթղթերում գրառումներ չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից հիսնապատիկի չափով:

3. Բժշկի կողմից հղիության արհեստական ընդհատման (աբորտի) բժշկական միջամտությունից անմիջապես առաջ հղի կնոջը հղիության արհեստական ընդհատման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու՝ օրենքով նախատեսված ժամանակահատված չտրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով:

4. Սույն հոդվածով նախատեսված արարքը կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի կրկնապատիկի չափով:

**Հոդված 47.13. Օրենքով թույլատրված դեպքերում հղիության արհեստական ընդհատում (աբորտ) իրականացնելիս օրենքով նախատեսված պարտադիր փաստաթղթերը չստանալը**

1. Օրենքով թույլատրված հղիության արհեստական ընդհատման (աբորտի) դեպքում բժշկի կողմից հղի կնոջ կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր դիմումը կամ գրավոր համաձայնությունը չստանալը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով:

2. Բժշկի կողմից օրենքով նախատեսված դեպքում հղիության արհեստական ընդհատումն առանց բժշկական հանձնաժողովի որոշման իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ինսունապատիկից հարյուրապատիկի չափով:

3. Սույն հոդվածով նախատեսված արարքը կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար՝ սույն հոդվածով նախատեսված տուգանքի կրկնապատիկի չափով:

## ՀԱՎԵԼՎԱԾ 1

### Չճնված երեխայի զարգացումը հղիության առաջին 22 շաբաթների ընթացում

#### Շաբաթ 1-4

- Հղիությունը սկսվում է, երբ սերմնաբջջիջը բեղմնավորում է ձվաբջջիջը
- Երեխայի սեռը որոշվում է սերմնաբջջիջով, որը կրում է կամ X կամ Y քրոմոսոմը: X քրոմոսոմը նշանակում է, որ սեռը իգական է, իսկ Y քրոմոսոմը՝ արական:
- Սաղմը տեղավորվում է արգանդի պատին
- Ձևավորվում է նյարդային խողովակ, որը հետագայում վերածվում է գլխուղեղի և ողնուղեղի
- Արագ ձևավորվում է արյունատար համարկարգը (այդ թվում պորտալարը), և սիրտը սկսում է բաբախել 3-րդ շաբաթվա սկզբին:

#### Շաբաթ 6

- Սկսվում է ուղեղային ալիքների գործունեությունը
- Ձևավորվում են թևերի և ոտքերի ոսկորները, ինչպես նաև ատամի սնաձկիները
- Ձեռքերը սկսում են շարժվել
- Առաջանում և մեծանում են աչքերի կոպերը, ձևավորվում է պրիմիտիվ քթի խոռոչ
- Շարունակում են ձևավորվել կենսական կարևորություն ունեցող օրգանները, այդ թվում՝ երիկամները, լյարդը, ենթաստամոքսային գեղձը, թոքերը, ստամոքսը և աղիքները:

#### Շաբաթ 5

- Առաջանում են մշտական երիկամները
- Ձևավորվում են ձեռքերը և դաստակի հոդերը
- Առկա են գանգուղեղային բոլոր նյարդերը, ձևավորում են վերջույթների նյարդերը
- Սկսվում է շարժումը



### Շաբաթ 7

- Գլուխը շարժվում է, ոտքերը շարժվում են, երեխան կարող է զկրտալ
- Ձեռքերը կարող են դիպչել միմյանց, մատները կարող են միմյանց ծածկել
- Միտքը, որը սկսել է բաբախել մի քանի շաբաթ առաջ, հիմա գրեթե ամբողջական է և շատ արագ է բաբախում (րոպեում 165-170 գարկ)
- Ոտքերի վրա հայտնվում են փոսիկներ, որոնք դառնալու են մատներ, ձևավորվում են ծնկահոդերը



### Շաբաթ 8

- Հոնքերի շուրջ առաջանում են մազեր
- Սկսվում է մեզի արտադրությունը և բացթողումը
- Հոդերը նման են մեծահասակի հոդերին
- Սկսում է արտահայտվել աջիկությունը կամ ձախիկությունը
- Ձեռքերի և ոտների մատները կարճ են և թաղանթավոր, բայց շարունակում են աճել
- Կոպերը միացված են



### Շաբաթ 9

- Շաբաթվա ընթացքում քաշն ավելանում է 75 տոկոսով
- Գլուխը ավելի մեծ է, քան մնացած մարմինը
- Երեխան կարող է ծծել բթամատը և շարժել լեզուն
- Առկա են վաղ ձայնալարերը,

### Շաբաթ 10

- Ձեռքերի և ոտքերի մատների վրա սկսում են աճել եղունգները, ձևավորվում են եզակի մատնահետքեր
- Ոսկորները սկսում են ամրանալ
- Ձևավորվում են առամների սնաճիկները, որոնք հետագայում դառնալու են մշտական առամներ

երեխան սկսում է հորանջել


### Շաբաթ 11

- Քիթը և շրթունքներն ամբողջությամբ ձևավորված են, սկսվում են դեմքի բարդ արտահայտությունները
- Վերարտադրողական օրգանները լավ ձևավորված են, և սեռը կարելի է տեսնել ուլտրաձայնի միջոցով
- Աղիքները կլանում են ջուրը և գլյուկոզան
- Շաբաթվա ընթացքում քաշն ավելանում է 60 տոկոսով



### Շաբաթ 12

- Ձեռքերը դաչում են բերանին ժամում 50 անգամ
- Լյարդի մեջ արտադրվում է լեղի
- Սկսում են գործել աղիքները
- Բերանի մեջ առկա են համի զգայարաններ



### Շաբաթ 13

- Աձում են ատամները և այլ հյուսվածքները
- Շնչուղիները պատվում են թարթիչներով
- Մարմնի մեծ մասը զգայուն է հպումների նկատմամբ

### Շաբաթ 14

- Ուղեղիկը նման է հասուն մարդու ուղեղիկին, իսկ գլխուղեղի կեղևն ունի չորս շերտ
- Այտերի մեջ առկա է ճարպային շերտ
- Բերանին դիպչելիս երեխան հետ է շրջվում

### Շաբաթ 15

- Ցողունային բջիջները հասնում են ոսկրածուծին
- Ճարպն առաջանում է ամբողջ մարմնում
- Արյան մեջ առկա է գլյուկագոն



### Շաբաթ 16

- Մայրը կարող սկսել զգալ երեխայի շարժումները
- Ձևավորվում է ատամների էմալը
- Բրոնխային ծառը գրեթե ավարտված է
- Երեխայի մոտ առկա է հորմոնալ սթրեսային արձագանք ինվազիվ գործողությունների նկատմամբ



### Շաբաթ 17

- Ցանցաթաղանթն ունի առանձին շերտեր
- Գլխուղեղի կեղևն ակտիվ է
- Աղիքներում կուտակվում է մեկոնիում (բաղկացած բջիջների կորստի, մարսողական սեկրեցիայի և կուլ տված ամնիոտիկ հեղուկի արտադրանքից)
- Աչքերը գտնվում են իրենց վերջնական դիրքում, ականջները գրեթե դադարեցրել են տեղաշարժը





### Շաբաթ 18

- Երեխայի մաշկը պաշտպանվում է ամնիոտիկ հեղուկի ազդեցությունից vernix caseosa կոչվող կրեմանման նյութով
- Ներքին ականջի ոսկորները և ուղեղի նյարդային վերջավորությունները բավարար զարգացած են ձայներ հայտնաբերելու համար
- Ձևավորվել են քրտնագեղձերը
- Սկսվել է ինսուլինի սեկրեցիան

### Շաբաթ 20

- Առկա են մաշկի բոլոր շերտերը և կառուցվածքները
- Ներքին ականջի խիտունջը հասնում է մեծահասակի չափերին, երեխան կարող է արձագանքել ձայներին
- Կոպերն առանձնանում են, աչքերը բացվում ու փակվում են
- Գլխի շրջանագիծը կազմում է մոտ 20 սանտիմետր
- Սկսվում է սուրֆակտանտի արտադրությունը, որն անհրաժեշտ է թոքերում զագերի փոխանակման համար

### Շաբաթ 21

- Ոտքերը հասնում են ճիշտ համամասնություններին
- Ուղեղը շատ արագ աճում է, նյարդերը սկսում են կազմել բարդ միացումներ, և այդ գործընթացը շարունակվելու է ծնվելուց հետո մոտ 5 տարի
- Մազերը սկսում են աճել գլխի մաշկի վրա
- Այս փուլում վաղաժամ ծնված երեխան ունի ապրելու ավելի քան 50 տոկոս հավանականություն

### Շաբաթ 19

- Սկսվում է մելանինի արտադրությունը
- Իգական սեռի երեխաների մոտ օգոնիաների քանակը (որոնք հետագայում դառնալու են ձվաբջիջներ) հասնում է առավելագույնի, օգոնիաների արտադրությունն ընդմիջտ դադարում է
- Արական սեռի երեխաներ մոտ սկսում է զարգանալ շագանակագեղձը
- Կենսաբանական ռիթմերի մեջ սկսվում են ամենօրյա ցիկլերը, օրինակ՝ քունը



## Շարաթ 22

- Առկա է զարգացած եղջերաթաղանթի կառուցվածք,
- Արյան մեջ զարգանում են սպիտակ բջիջներ, որպեզի երեխային թույլ տան պայքարել վարակների դեմ,
- Քաշ հավաքելուն զուգահեռ նվազում է մաշկի թափանցիկությունը և կնճռոտվածությունը
- Ներքին ականջի ոսկորները կարծրանում են, և լսողությունը դառնում է ավելի պարզ



## ՀԱՎԵԼՎԱԾ 2

Աբորտի գոհ դարձած երեխաների նկարներ



I - 7 շաբաթ



II - 7 շաբաթ



III - 7 շաբաթ



IV - 7 շաբաթ





V- 7 շաբաթ



VI- 7 շաբաթ



VII- 7 շաբաթ



VIII- 7 շաբաթ



IX- 8 շաբաթ



X- 8 շաբաթ



*XI - 8 շաբաթ*



*XII - 8 շաբաթ*



*XIII - 8 շաբաթ*



*XIV - 8 շաբաթ*






XV - 8 շաբաթ



XVI - 9 շաբաթ



XVII - 9 շաբաթ



XVIII - 9 շաբաթ




XIX - 9 շաբաթ




XX - 9 շաբաթ






XXI - 10 շաբաթ



XXII - 10 շաբաթ



XXIII - 10 շաբաթ



XXIV - 10 շաբաթ





XXV - 10 շաբաթ



XXVI - 10 շաբաթ



XXVII - 10 շաբաթ



XXVIII - 10 շաբաթ



XXIX - 10 շաբաթ




XXX - 10 շաբաթ





XXXI - 11 շաբաթ



XXXII - 11 շաբաթ



XXXIII - 11 շաբաթ



XXXIV - 12 շաբաթ

### Երկրորդ և Երրորդ Շաբաթյակ













